



B | S | T The Black Sea Trust
for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

THE SIGRID RAUSING TRUST



**«Անկախ Ղիտորղ» հասարակական դաշինք
2021 թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական
քարոզչության
երկարաժամկետ Ղիտարկման ամփոփում
/07.06.2021-16.06.2021/**





Քաղաքական համատեքստն ու նախընտրական մթնոլորտը

Նախընտրական քարոզչության՝ օրենքով սահմանված ժամանակահատվածում առավել սրվեց քաղաքական մթնոլորտը: Մրցակից ուժերը հայիոյանքի, բռնության, ատելության խոսքի անցան առաջին դեմքերի մակարդակով: Նրանց կողմից արտաբերված յուրաքանչյուր հաջորդ միտք, հայտարարություն, քննարկվող վարքագծային դրսևորում՝ իր ատելության, հայիոյախոսության չափաքանակով գերազանցում էր նախորդին:

Շարունակական բնույթ կրեցին ընտանիքների, երեխաների թիրախավորումը: Այս վարքագիծը բացասական կորագծով արտահայտվում է նաև հասարակական հարաբերություններում: Խորանում են տարբեր քաղաքական ուղղվածություն ունեցող խմբերի միջև անջրպետները:

Բացի իշխանություն–ընդդիմություն պայքարի ձևաչափից՝ մտահոգիչ է նաև ընդդիմադիր տարբեր թևերի միջև ոչ քաղաքական մրցակցությունը: Այդ մրցակցությունն ընթանում է վարչական ռեսուրսների տիրապետման (ՏԻՄ ղեկավարներ, տեղական տարբեր հիմնարկների տնօրեններ և այլն), խոշոր գործատուների ուղղորդման և «ձայնային ձեռներեցների» («տասովչիկների») սեփական ճամբարում տեղավորելու գործողություններով:

Ներկա նախընտրական ժամանակահատվածում քաղաքական իրավիճակի Էական առանձնահատկություն է նաև այն, որ առաջին անգամ ընտրությունների ժամանակ իշխանությունը չունի բավարար վարչական, ֆինանսական և այլ ռեսուրսներ ամբողջապես կառավարելու և վերահսկելու քաղաքական գործընթացները: Միաժամանակ ընդդիմության որոշ ճյուղեր ունեն անհամեմատ ավելի մեծ ծավալի ֆինանսական ռեսուրսներ և բավականաչափ վարչական ռեսուրսներ՝ ընտրական գործընթացների վրա ապօրինի ազդեցություն ունենալու՝ ընդհուպ մինչև զանգվածային կեղծիքներ իրականացնելու համար:

Ուժային կառույցները նույնպես գերծ չեն քաղաքական գործընթացներից: ԱԱԾ, Ոստիկանության, քննչական մարմինների մի շարք պաշտոնյաներ ունեն քաղաքական նախապատվություններ, որոնք չեն թաքցնում: Ավելին, որոշ դեպքերում բացահայտ լծված են քարոզչություն իրականացնելու գործին:





«Եկեղեցին դուրս է քաղաքականությունից» իրականության հետ աղերս չունեցող, սակայն միշտ շրջանառվող պնդումն այլևս լիովին իմաստագրվել է: Առաքելական եկեղեցու ազդեցիկ դեմքեր և մեծ թվով սպասավորներ ակտիվ և հրապարակային մասնակցում են քաղաքական գործընթացներին՝ ընդդիմության դիրքերից: Շատ հոգևորականներ քաղաքական ելույթներ են ունենում տարբեր հարթակներում: Նրանցից որոշների խոսույթը չի տարբերվում քաղաքական գործիչների հայիոյախառն խոսքից: Առաքելությունն արձանագրել է դեպքեր, երբ հոգևորականները եկեղեցական արարողությունները՝ պատարագներն են օգտագործել քաղաքական քարոզչության նպատակով:





Դիտարկման ընթացքում արձանագրված խախտումները

Բռնություններ և ճնշումներ

Նախընտրական քարոզչության փուլում արձանագրված դեպքերից են՝

1. Գյումրի քաղաքում ԲՊ հանրահավաքին հաջորդած երթի ընթացքում բախում է տեղի ունեցել «Հայաստան» դաշինքի կողմնակիցների և ԲՊ համակիրների միջև:
2. Երևանում ԲՊ երթի ժամանակ բախում է տեղի ունեցել Բարգավաճ Հայաստան կուսակցության նախընտրական շտաբում ԲՊ կողմնակիցների ու ԲՀԿ-ի շտաբի աշխատակիցների միջև:
3. Իսկ ահա Արմավիրում տեղի ունեցող ԲՊ հանրահավաքի ժամանակ քաղաքացու ծեծին մասնակցել են նաև ոստիկանության աշխատակիցներ: Դեպքը տեղի է ունեցել Ալեն Սիմոնյանի ելույթի ժամանակ, երբ քաղաքացիներից մեկը դժգոհություն է հայտնել: Փոխադարձ վերբալ առճակատմանը միջամտել են ոստիկանները և քաղաքացուն հեռացրել տարածքից: Ըստ հեռացվողի ընկերոջ պնդման՝ այդ ընթացքում ոստիկանները նրա նկատմամբ կիրառել են բռնություն:
4. Նմանատիպ՝ կոշտ մոտեցման է արժանացել նաև միջին տարիքի մի կին Էջմիածին քաղաքում, երբ ԲՊ հանրահավաքի ժամանակ որոշել է բողոքի ձայն բարձրացնել: Ոստիկաններին դա դուր չի եկել և նրան կոպտորեն հեռացրել են տարածքից:
5. Փարաքար համայնքի մի բնակչի «Նիկոլ դավաճան» վանկարկումներից հետո նրան ծեծի են ենթարկել իշխող ուժի կողմնակիցներ: Քաղաքացին ստացել է մարմնական վնասվածքներ:
6. Երևանի 16-րդ թաղամասում ԲՊ ներկայացուցիչների քարոզչական երթի ժամանակ, «Հայաստան» դաշինքի շտաբներից մեկի պետի կինը, մի խումբ այլ կանանց հետ սադրել և հայիոյախառը հայտարարություններ է արել երթի մասնակիցների հասցեին: Ոստիկանության միջամտությամբ իրավիճակը հանդարտվել է:
7. ԶՈ կուսակցության անդամ Գարեգին Միսկարյանի նույն՝ 16-րդ թաղամասում քարոզչություն իրականացնելու ժամանակ, քաղաքացիներից ոմանք սկսել են պաշտպանել Նիկոլ Փաշինյանին: Վեճին միջամտել են «Հայաստան» դաշինքի աջակիցները և սկսվել է սովորական ծեծկռտուք: Ծեծկռտուքի ընթացքում վնասվել է Գարեգին Միսկարյանի ականջը:





8. Երևանի Մարզարյան փողոցի այգիներից մեկում մի խումբ աղջիկներ և մեկ երիտասարդ բաժանել են «Հայաստան» դաշինքի քարոզչական նյութերը: ՔՊ համակիր ներկայացող անձը պատռել է դրանք: Արդյունքում սկսվել է ծեծկռուտք, որի հետևանքով վնասվածքներ է ստացել ՔՊ համակիրը:
9. Դիտարկված ժամանակահատվածում անհայտ անձինք կոտրել են Նոր Նորքի ՔՊ շտաբի պատուհանը:

«Բարեգործություն», ընտրակաշառքի այլ դրսևորումներ (սպառնալիքներ),

Թե՛ դիտորդներից, թե՛ քաղաքացիներից ստացվում են բազմաթիվ ահազանգեր աննախադեպ բարձր և մեծ թվով ընտրակաշառքների վերաբերյալ: Այս հանցավոր գործունեության առանձնահատկությունն այն է, որ կիրառվում են բարեկամական և ընկերական կապերն ու հարաբերություններն այնպես, որ ըստ էության բոլորին դարձնում են հանցակից՝ գրեթե անհնար դարձնելով առանձին դեպքերով բողոքներն ու հետևողական բացահայտումը:

1. 12.06.2021թ. «Անկախ դիտորդ» դաշինքը ստացել է ահազանգ այն մասին, որ Վանաձոր քաղաքի հանրակացարաններում առաջարկել են 70 000-200 000 ՀՀ դրամ գումար՝ Նիկոլ Փաշինյանի թուղթը (ՔՊ-ի քվեաթերթիկը) դուրս բերելու կամ առաջարկված թեկնածուի օգտին քվեարկելու դիմաց տրամադրվելու մասին (առկա է ձայնագրություն): ՀՀ դատախազությունն ներկայացվել է հաղորդում:
2. Ըստ մեկ այլ ահազանգի՝ այդ նույն տարածքում հաջորդ օրը ոմն Իլոնա/Համբարձումյանի/Վարդումյանի կողմից, «Հայաստան» դաշինքի շտաբում բաժանվում է ընտրակաշառք: Նշվածի հիման վրա հաղորդում է ներկայացվել ՀՀ դատախազությունն :
3. Մասիս քաղաքի բնակչի կողմից ահազանգ է ստացվել առ այն, որ Մասիսի համայնքապետ Դավիթ Համբարձումյանի («Պատիվ ունեմ» դաշինքի թեկնածու) կողմից սկսվել է ըստ թաղամասերի մարդկանց ցուցակարգման գործընթաց՝ համայնքի ղեկավարի՝ գործընթացը համակարգող տեղակալ Խորեն Արոյանի, խորհրդական Գևորգ Կոստանյանի, ավագանու անդամ Արման Ղազարյանի մասնակցությամբ, Աշոտ Անտոնյանի, Համլետ Խաչատրյանի, ոստիկանության օպեր Ռազմիկ Գասպարյանի, Սևակ Խաչատրյանի, Մակիչ Հակոբյանի կողմից





թաղամասերում ակտիվ ցուցակագրման իրականացմամբ և գումարային խոստումներ տալով: Համաձայն ահազանգի՝ նշված գործընթացը ներառում է նաև մարդկանց՝ 30 000 ՀՀ դրամի դիմաց քվեարկելուց հետո քվեաթերթիկները դուրս հանելու «առաջարկի» ներկայացումը և աշխատանքի տեղավորման խոստումներ տալը: Ներկայացվել է հաղորդում ՀՀ դատախազություն:

4. Ստացվել է ահազանգ՝ Լոռու մարզի Ամրակից, Գարգառ, Կուրթան, Յոբարձի, Պուշկինո, Գյուլագարակ և Վարդաբլուր գյուղերն ընդգրկող Գյուլագարակ խոշորացված համայնքի համայնքապետ Միեր Գևորգյանի և նշյալ գյուղերի վարչական ղեկավարների, Օձունի գյուղապետ Արսեն Տիտանյանի կողմից վարչական ռեսուրսի կիրառմամբ հոգուտ Ռոբերտ Քոչարյանի ազիտացիոն աշխատանքներ տանելու վերաբերյալ: Ներկայացվել է հաղորդում ՀՀ դատախազություն:
5. Ստացվել է ահազանգ այն մասին, որ Երևանում՝ Էրեբունի վարչական շրջանում, ցեմենտի գործարանի (ահազանգողը չի նշել կոնկրետ գործարանը) աշխատակից հանդիսացող վարորդներին «խալո» մականունով անձը ստիպում է իրենց ընտանիքների հետ միասին ձայն տալ Ռոբերտ Քոչարյանին («Հայաստան» դաշինք)՝ հակառակ դեպքում սպառնալով վերցնել մեքենաները՝ զրկելով աշխատելու հնարավորությունից: Նույն ահազանգի համաձայն՝ նշված անձը 14.06.2021 թվականին՝ երեկոյան 22:00-ի սահմաններում, վարորդներին ուղարկել է Վարդենիս համայնքի Կարճաղբյուր գյուղ՝ ընտրողների ցուցակագրում (ձայն հավաքելու) իրականացնելու համար: Ներկայացվել է հաղորդում ՀՀ ոստիկանություն:
6. Հաջորդ ահազանգի համաձայն՝ Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը քաղաքապետարանի աշխատակիցներին, համայնքի բնակավայրերի բնակիչներին, գործարարներին ստիպում է ընտրել Ռոբերտ Քոչարյանին՝ սպառնալով հեռացնել աշխատանքից կամ խոչընդոտել նրանց բիզնես գործունեությանը: Ներկայացվել է հաղորդում ՀՀ ոստիկանություն:
7. Երևան քաղաքի Մետաքսի թաղամասից ստացվել է ահազանգ, որ Խորենացի փողոցի «Ծիրան» սուպերմարկետի թաղում «Պելե» մականվամբ (իրական անունը՝ Սարգիս) հայտնի ձայնային ձեռներեցը («տասովչիկ»), համատիրության (ենթադրյալ աշխատակից) Ալլա Հովհաննիսյանի միջոցով բաժանում է գումար «Հայաստան» դաշինքի համար: Ներկայացվել է հաղորդում ՀՀ ոստիկանություն:





8. Ըստ հաջորդ ահազանգի՝ Երևան քաղաքի Աջափնյակի 15-րդ թաղամասում «Հայաստան» դաշինքի՝ Շիրազի փողոցում գտնվող 15 շտաբի համակարգող Պանտերայի (ենթադրաբար տաքսի ծառայության) Հայկը տուն առ տուն իրականացնում է ընտրողների ցուցակագրում՝ առաջարկելով կոմունալների վճարման փոխհատուցում: Ներկայացվել է հաղորդում ՀՀ ոստիկանությանը:
9. Վանաձորի «Տարոն» թաղամասում «Հայաստան» և «Պատիվ ունեմ» դաշինքների աջակից կանայք փորձել են պայմանավորվել, թե ով որ շենքում է կաշառք բաժանելու: Տարված լինելով կաշառքային տիրույթների կիսելու «Հայաստանին պատիվ բերող» գործով, նրանք չեն նկատել այդ քննարկմանը դիտորդի ներկայությունը:
10. Նույն անգգուշությամբ, արդեն Երևանի Մալաթիա–Սեբաստիա թաղամասում, ՔՊ աջակիցները դիտորդի ներկայությամբ հավաքագրելիս են եղել իրենցից օգնություն հայցող մարդկանց տվյալները:
11. Դաշինքի տրամադրության տակ առկա է ձայնագրություն, որտեղ մի երիտասարդ կին տեղեկացնում է ընկերուհուն այն մասին, որ նրա տվյալները ներկայացրել է որպես Ռոբերտ Քոչարյանին ընտրող անձ: Ըստ հորդորողի՝ յուրաքանչյուր 10 հաստատման դիմաց ինքն ստանալու է 55 հազար ՀՀ դրամ և արդեն ունի 20 անձի ցուցակ: Հաղորդագրության մեջ կինը տեղեկացնում է, որ համաձայնվողը կարող է ընտրել ում ցանկանա, իր համար կարևոր է միայն, որ ստուգող զանգ ստանալու պարագայում նա ասի, որ ընտրելու է Քոչարյանին:
12. Արագածոտնի մարզի Թալին քաղաքից ստացված արձագանքի համաձայն՝ ՀՀԿ շտաբը հավաքագրում է դիտորդների (շտաբը նշել է հենց դիտորդների և ոչ թե վստահված անձ)՝ առաջարկելով վճարել նաև ձայնի դիմաց:
13. Հաջորդը դեպքը նույնպես Թալինից է: Վարսավիրանցում, մեր դիտորդի ներկայությամբ, մի երիտասարդ կին պատմել է, որ ներառված է հանձնաժողովում ԲՀԿ քվոտայով, որի համար դրված է պայման, ըստ որի ընտանիքի բոլոր անդամները պետք է ընտրեն ԲՀԿ:
14. Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակիչներն ահազանգում են, որ «Հայաստան» և «Պատիվ ունեմ» դաշինքներն առաջարկում են համապատասխանաբար 200 000 և 150 000 դրամ մեկ ձայնի դիմաց: Թերևս պիտի արձանագրենք, որ քաղաքացու ձայնը երբեք այսքան արժևորված չի եղել:
15. Մեկ այլ ահազանգի համաձայն՝ Վանաձորի խնամքի կենտրոնի («Լոռու մարզի երեխայի և ընտանիքի





աջակցության կենտրոն» ՊՈԱԿ) տնօրենը շահառու ընտանիքների երեխաների ծնողներին հորդորել է քվեարկել «Հայաստան» դաշինքի օգտին, հակառակ պարագայում սպառնալով նրանց երեխաներին չմատուցել պետության կողմից ֆինանսավորվող ծառայությունը:

16. Քվեարկության պարտադրման արատավոր բարքերը շարունակվում են նաև բանակում: Գեղարքունիքի և Սյունիքի մարզերից, գինվորներից ստացած ահազանգերի համաձայն, սպայական կազմի դաշնակցական ներկայացուցիչները հրահանգում են քվեարկել «Հայաստան» դաշինքի օգտին:
17. Վերոնշյալ երևույթն արձանագրվել է նաև ոստիկանական համակարգում: Մեծամորից ստացած ահազանգի համաձայն՝ Էջմիածին քաղաքում որոշ ոստիկանների հրահանգվել է քվեարկել «Պատիվ ունեմ» դաշինքի օգտին:
18. Սպիտակ քաղաքից ստացված ահազանգի համաձայն՝ ջրմուղի աշխատակից ոմն Դավիթ, տնտուսն այցելելով, ընտրակաշառք է խոստանում «Հայաստան» դաշինքի օգտին քվեարկելու դիմաց:
19. Իսկ Վանաձորի թիվ 30 դպրոցի տնօրեն՝ Նույն քաղաքի Նախկին քաղաքապետ Սամվել Դարբինյանի քույրը, սպառնալով հրահանգել է ծնողներին ընտրել «Հայաստան» դաշինք: Սպառնալիքներից հետո տնօրենը նաև ընտրակաշառք է խոստացել:
20. Երևան քաղաքում ստացված տեղեկատվության համաձայն՝ Ներքին Չարբախում գտնվող «Հայաստան» դաշինքի շտաբում, ըստ ցուցակագրման՝ բաժանվում են 20.000-ական դրամներ:
21. Ըստ մեկ այլ ահազանգի՝ քաղաք Երևանում՝ Կիևյան 3 հասցեում գտնվող շենքի կամարամուտքի հետնամասում գտնվող ավտոսպասարկման սրահում, գումար է բաժանվել: Հաղորդում է ներկայացվել Արաբկիրի ոստիկանության բաժին: Դեպքի վայր ժամանած ոստիկանները որևէ փաստ չեն արձանագրել:
22. Մեկ այլ ահազանգի հետքերով Արմավիրի ոստիկանները ընտրակաշառք տալու պահին բերման են ենթարկել Արմավիրի Նախկին քաղաքապետին: Դաշինքն այդ մասով ահազանգ ներկայացրել էր, սակայն չենք բացառում այն հանգամանքը, որ ոստիկանությունն ուներ համապատասխան օպերատիվ տվյալներ:
23. Ընտրակաշառքի այլ մեթոդ է կիրառում ԱԺ Նախկին պատգամավոր Հակոբ Հակոբյանը: Վարդահովիտ գյուղում իրեն պատկանող ՀԷԿ-ի աշխատակիցներին նա խոստացել է 100.000-ական դրամ պարգևավճար, եթե քվեարկեն «Հայաստան»

դաշինքի

օգտին:





Ներկայացվել է հաղորդում Հայաստանի Հանրապետության ոստիկանության Քրեական ոստիկանության գլխավոր վարչություն:

24. Իսկ ահա Արագածոտնի մարզի Օհանավան և Կարբի համայնքում, ըստ ահազանգի, Ռ. Քոչարյանի օգտին քվեարկելու համար բաժանվում է 100.000–ական դրամ: Բնակիչների պնդումների համաձայն՝ այդ գործում ներգրավված են երկու գյուղերի գյուղապետերը:

Վարչական/բիզնես ռեսուրսների կիրառում

Այս ընտրությունների Էական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վարչական ռեսուրսների ու լծակների տիրապետում է ոչ միայն իշխող ուժը, այլև նաև ընդդիմությունը՝ ում աջակցում են բազմաթիվ համայնքապետեր՝ ՀՀ ողջ տարածքում: Արձանագրված դեպքերից մեկում «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչը ենթադրյալ չարաշահման մասով հայտարարություն է ներկայացրել Էջմիածնի քաղաքապետի դեմ: Մյուս բոլոր դեպքերում ավելի շատ գործ ունենք ընդդիմության կողմից վարչական ռեսուրսների կիրառման փաստերի հետ: Ընդհանուր դիտարկմամբ հստակ է, որ ընդդիմադիր համայնքապետերի զգալի մասը լծված է քարոզչություն իրականացնելուն (նաև աշխատանքային ժամերին): Նրանք են նաև ապահովում «Հայաստան» դաշինքի մարզային հանդիպումների մասնակիցներին: Վարչական ռեսուրսի չարաշահման հետ կապված որոշ դեպքերը ներկայացված են ստորև.

1. Քաջարանում սկսվել է լայնածավալ շինարարություն՝ համայնքային միջոցներով: Քաջարանի քաղաքապետն աջակցում է «Հայաստան» դաշինքին:
2. «Հայաստան» դաշինքի մեկ այլ աջակից՝ Գորիս համայնքի համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար Իրինա Յոլյանի որոշմամբ հողակտոր է հատկացվել, իսկ «սոցիալական օգնություն» տողից 300.000–ական դրամ հատկացվել երկու բնակչի: Տվյալներն առկա են համայնքապետարանի կայքում:
3. Արմավիրի տարածաշրջանային քոլեջի դասախոսն օգտագործում է դասաժամերը «Հայաստան» դաշինքի օգտին քարոզելու նպատակով:
4. Քարոզարշավին զուգահեռ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը ներկայացնում է սուբվենցիոն ծրագրերը:
5. Իսկ նույն մարզի Գեղիովիտ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն Է. Ասլանյանը, ՀՀԴ աջակից լինելով, աշխատանքային ժամերին իրականացնում է «Հայաստան»





- դաշինքի քարոզչություն և «բարեկամաբար հորդորում» ընտրել միայն այդ դաշինքին:
6. Ըստ «Լուսավոր Հայաստանի» աջակիցներից ստացված տեղեկատվության՝ Տավուշի նախկին մարզպետ Յովիկ Աբովյանն օգտագործել է իր հասարակական դիրքը և հոգեբանական ճնշումներ է գործադրել՝ խոչընդոտելով մարդկանց մասնակցությունը «Լուսավոր Հայաստան» կուսակցության հավաքին:
 7. Արարատի մարզի «Հայաստան» և «Պատիվ ունեմ» դաշինքների շտաբների պետերից ստացված ահազանգերի համաձայն՝ վարչապետի պաշտոնակատարի այցից առաջ, նրանց հետ «դաստիարակչական-բացատրական» աշխատանքներ է տարել նույն մարզի ոստիկանապետը՝ հորդորելով որևէ դեպքում չանել տիպիկ վանկարկումներ:
 8. Ըստ Սյունիքից ստացված ահազանգի՝ «Հայաստան» դաշինքի աջակից՝ Քաջարանի քաղաքապետ Մանվել Փարամազյանը, ոչ միայն աշխատանքային ժամերին զբաղված է քաղաքական քարոզչությամբ, այլ նաև օգտագործելով իր դիրքը և ռեսուրսները, բռնության սպառնալիքներով, ատելության խոսքով թույլ չի տալիս քաղաքացիներին աջակցել իշխող ուժին:
 9. Սյունիքի մարզի մեկ այլ բնակավայրի՝ Քարահունջի համայնքապետարանի աշխատակցուհի Լուսինե Ավետյանը համայնքապետարանի գույքը տեղափոխել է «Հայաստան» դաշինքի շտաբ:
 10. Երևան քաղաքի 6-րդ Տարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարը, որը մեծ մասամբ հրաժարվել է պատասխանել մեր դիտորդի «քաղաքական» հարցերին, պնդելով, որ դա իր գործառույթներին չի վերաբերում, ըստ ահազանգերի՝ համատեղում է աշխատանքը «Հայաստան» դաշինքի շտաբում:
 11. Հրազդան քաղաքում, համաձայն ստացված ահազանգի, ՔՊ-ն ուսումնական հիմնարկների և համայնքապետարանի աշխատակիցներին, պարտադրել է նրանց ներկա գտնվել նախընտրական հանրահավաքին:
 12. Ըստ մեկ այլ ահազանգի՝ Երևանի Այգեձոր թաղամասում ոստիկանության թաղային լիազորը դռնեղուռ ընկած, օգտագործելով իր պաշտոնական դիրքը, հորդորում է քվեարկել «Հայաստան» դաշինքի օգտին:
 13. «Հայաստան» դաշինքի, ՔՊ-ի և ԲՀԿ-ի կողմից համատարած են դեպքերը, երբ նշյալ ուժերը քարոզչական միջոցառումների մեջ են ներքաշում անչափահասներին, թեև չկա հաստատված որևէ տեղեկատվություն, թե որքանով է այս մասնակցությունը պարտադրված:





Աշխատանքային իրավունքներին առնչվող խնդիրներ

Աշխատանքային իրավունքների խախտումն ընտրական գործընթացում ամենատարածվածներից և միաժամանակ ամենաբարդ փաստագրվողներից է: Հաշվի առնելով Հայաստանում առկա սոցիալական խնդիրները, գործազրկության մակարդակը՝ աշխատանք ունեցողները խուսափում են խոսել այս մասին և ենթարկվում են գործատուների ապօրինի հրահանգներին՝ միայն բացառիկ դեպքերում ընդվզելով քաղաքական հայացքների պատճառով հետապնդման դեմ: Սա վկայում է շարունակվող համակարգային խնդրի՝ աշխատանքային իրավունքների պաշտպանված չլինելու իրողության մասին:

1. Ըստ ստացված ահազանգերի՝ «Հայաստան» դաշինքի՝ Կապանում տեղի ունեցած հանդիպմանը, աշխատանքից ազատման սպառնալիքով մասնակցել են դպրոցների, մանկապարտեզների, թատրոնների աշխատակիցներ, ՁՄՊԿ կոլեկտիվը:
2. Մեկ այլ ահազանգի համաձայն՝ Concept Events, Lore Travel, Visit Armenia, AllHotels հիմնարկությունների հիմնադիր Վլադիմիր Գևորգյանը հրահանգել է բոլոր աշխատակիցներին՝ պարտադիր մասնակցել ընտրություններին ու չընտրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը:
3. Լոռու Մարզի Սպիտակ քաղաքի «Սպիտակի թռչնաֆաբրիկայի» սեփականատեր Արկադի Համբարձումյանը աշխատակիցներին հրահանգել է քվեարկել «Պատիվ ունեմ» դաշինքի օգտին՝ հակառակ պարագայում սպառնալով ազատել աշխատանքից:
4. Ըստ ստացված ահազանգի՝ «Գրանդ Տոբակո» ընկերության աշխատակիցներին ստիպել են մասնակցել Վանաձորում տեղի ունեցած «Պատիվ ունեմ» դաշինքի հավաքին:
5. Դալարիկ գյուղի բնակիչներին, որոնք աշխատում են դաշտերում՝ մեկ գործատուի մոտ, ստիպել են մասնակցել Արմավիրում տեղի ունեցած՝ «Հայաստան» դաշինքի հավաքին: Հավաքին նրանց բերել են ստիպողաբար՝ աշխատանքային արտահագուստով:

Զդասակարգված խախտումներ





1. Ընտրապայքարի մեջ մտած հիմնական ուժերը՝ ԶԴ-ն և «Հայաստան» դաշինքը տեղերում բարձր հանրային մասնակցություն ունենալու համար կիրառում են շրջիկ ցուցարարների մեթոդը:
2. Արմավիրում արձանագրվել է դեպք, երբ մեկ այլ երկրի դեսպանատան պետհամարանիշներով մեքենայով քարոզչություն է իրականացվել «Հայաստան» դաշինքի օգտին:
3. Խիստ տարածված են «ընդհատակյա շտաբները», երբ փաստացի ֆորմալ որևէ նշում չկա, բայց տարածքը ծառայում է, որպես այդ ուժի հավաքատեղի և թաքցվում ինչ-որ պատճառով: Այս մեթոդից հատկապես օգտվում են ԲՀԿ-ն, «Պատիվ ունեմ» և «Հայաստան» դաշինքները:
4. «Հայաստան» դաշինքի հետ ասոցացվող անձանց կողմից պատրաստվում և տարածվում են ատելություն, թշնամանք և բռնություն խրախուսող մանիպուլյատիվ տեսահոլովակներ, որոնք կեղծ թեզերով զգուշացնում են ընտրողներին, որ չքվեարկեն 3-րդ համարի (ԶԴԿ) օգտին:





Մեդիա մոնիթորինգի թվական տվյալներ

Հունիսի 7-15-ն ընկած ժամանակահատվածում արտահերթ ընտրություններին մասնակցող ուժերը մեր կողմից մշտադիտարկվող հեռուստաալիքների կողմից հատկացվող վճարովի և անվճար եթերաժամանակից օգտվել են հետևյալ կերպ՝ ըստ ՀՌՀ-ի.

1. Հանրային անվճար եթերաժամանակից չի օգտվել միայն «Հայոց հայրենիք» կուսակցությունը: Ամենաքիչն օգտվել է «Միասնական հայրենիք» կուսակցությունը՝ 5 րոպե 48 վրկ, իսկ ամենաշատը ՀԱԿ, ԲՊ, ԼՀԿ, «Մեր տունը Հայաստանն է», «Հանրապետություն», ԲՀԿ, «Ազգային օրակարգ» կուսակցությունները և «Հայաստան» և «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների» դաշինքները՝ 18-ական րոպե:
2. Հանրային վճարովի եթերաժամանակից ամենաշատն օգտվել է «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների» դաշինքը՝ 39 ր. 58 վ., իսկ ամենաքիչը «Ազատ հայրենիք» դաշինքը՝ 20 վայրկյան:
3. «5-րդ ալիք» վճարովի եթերաժամանակից ամենաշատն օգտվել է «Մեր տունը Հայաստանն է» կուսակցությունը՝ 48 րոպե, իսկ ամենաքիչը «5165 ազգային պահպանողական շարժումը»՝ 16ր. 40վ.:
4. «Արմյուզի» վճարովի եթերաժամանակից ամենաշատն օգտվել է «Պատիվ ունեմ» դաշինքը՝ 242 ր., իսկ ամենաքիչը «5165 ազգային-պահպանողական շարժումը»՝ 10ր.:
5. «Երկիր Մեդիայի» վճարովի եթերաժամանակից ամենաշատը օգտվել է «Պատիվ ունեմ» դաշինքը՝ 95ր. 52վ., իսկ ամենաքիչը՝ «5165 ազգային պահպանողական շարժումը»՝ 11ր. 59վ.:
6. «Կենտրոնի» վճարովի եթերաժամանակից ամենաշատը օգտվել է «Հայաստան» դաշինքը՝ 118ր. 8վ., իսկ ամենաքիչը՝ ԼՀԿ-ն 78ր. 59վ.:

Հեռուստաալիքների փրայմ-թայմ ժամանակահատվածի լրատվական հաղորդումներում քաղաքական ուժերի լուսաբանումը

1. «5-րդ ալիք» (հունիսի 7-15) և «Կենտրոն» (հունիս 7-13) հեռուստաընկերությունների փրայմ-թայմ ժամանակահատվածում ընկած լրատվական հաղորդումներում լուսաբանվել են ընտրություններին մասնակցող բոլոր ուժերը:
2. «5-րդ ալիքում» հունիսի 15-ի դրությամբ ամենաշատը լուսաբանվել է ԲՊ-ն՝ 296ր. 7վ., իսկ ամենաքիչը՝ «Ազատ հայրենիք» դաշինքը՝ 58 վայրկյան:
3. «Կենտրոնում» հունիսի 13-ի դրությամբ ամենաշատը լուսաբանվել է ԲՊ-ն՝ 85ր. 5վ., իսկ ամենաքիչը «Ազգային օրակարգ» կուսակցությունը՝ 20վ.:





4. Հանրայինը հունիսի 14-ի դրությամբ լուսաբանել է բոլոր մասնակից ուժերին, բացի «Համահայկական ազգային պետականություն» (ՀԱՊ) կուսակցություններից: Հանրայինով ամենաշատ լուսաբանված ուժը ՔՊ-ն է 58 ր., իսկ ամենաքիչը՝ «Ազգային օրակարգ» կուսակցությունը՝ 128 վ.:
5. «Երկիր Մեդիա» հեռուստաալիքը հունիսի 14-ի դրությամբ լուսաբանել է ՔՊ, ԲՀԿ, «Հայաստանի եվրոպական», «Մեր տունը Հայաստանն է», «5165 ազգային պահպանողական շարժում», ԼՀԿ, ՀԱԿ, «Ինքնիշխան Հայաստան», «Զարթոնք» կուսակցություններին և «Հայաստան», «Ազատ հայրենիք» և «Պատիվ ունեմ» դաշինքներին: Հեռուստաալիքը չի լուսաբանել մասնակցող 13 ուժի:
6. «Երկիր Մեդիայի» լրատվական թողարկումներում ամենից շատ լուսաբանված ուժը «Հայաստան» դաշինքն է՝ 155 ր., 7վ., իսկ ամենաքիչ լուսաբանված ուժը՝ «Ինքնիշխան Հայաստան» կուսակցությունը՝ 15վ.:
7. Այսպիսով՝ բացի «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունից՝ մնացած ալիքները պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առ հունիսի 14-ը լուսաբանել են բոլոր մասնակից ուժերին՝ սակայն լուսաբանման տևողության բավականին մեծ տարբերությամբ:
8. Իսկ «Արմնյուզից» Աբրահամ Գասպարյանը հայտարարել է, որ իր հեղինակային «Երեկոյան լուրեր Աբրահամ Գասպարյանի հետ» հաղորդման ընթացքում չի լուսաբանելու որևէ քաղաքական ուժի և գործչի և հունիսի 10-ի դրությամբ փրայմ-թայմ ժամանակահատվածում չի լուսաբանել:

Դիտարկման մեթոդաբանությունը

Երկրորդ փուլի դիտարկումն իրականացվում է ողջ հանրապետության տարածքում՝ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների մակարդակում:

Երկրորդ փուլի դիտարկման առանցքներն են.

- քարոզարշավի ընթացքում թեկնածու կուսակցությունների՝ քարոզարշավը վարելու մարտավարությունը և օգտագործվող հռետորաբանությունը,
- թեկնածու կուսակցությունների աշխատանքային էթիկան, ընտրական շտաբների կառուցվածքը և ֆինանսավորումը,
- ընտրական վարչարարություն իրականացնող կառույցների, ՏԻՄ և պետական մարմինների ներկայացուցիչների և ծառայողների վարքագիծը՝
 - համագործակցությունը կամ խոչընդոտումը,
 - ներգրավվածությունը քարոզարշավում,





- քարոզարշավի ընթացակարգային մասի հանդեպ վերահսկողությունը,
- ռադիո, հեռուստատեսության, առցանց և տպագիր ՁԼՄ-ների վարքագիծը քարոզչության փուլում,
- քարոզչության հավասար լուսաբանում,
- գովազդման կամ լուսանցքայնացման (օր. հատուկ չլուսաբանելու) միջոցով քարոզչական կամ հակաքարոզչական գործունեություն,
- դիտարկվող տարածքում հիմնական ՁԼՄ-ների կոնտենտի վերլուծություն՝ ըստ քարոզարշավին մասնակցող քաղաքական ուժերի,
- սոցիալական ցանցերի տեղեկատվության ուսումնասիրություն:

Երկրորդ փուլի դիտարկման ժամանակահատվածը համապատասխանում է Նախընտրական քարոզչության՝ օրենքով սահմանված ժամանակահատվածին՝ 2021 թ. հունիսի 7-ից 18-ը: Նախընտրական քարոզչության՝ օրենքով սահմանված ժամանակահատվածում դիտարկումն իրականացվել է 64 դիտորդի կողմից:





«Անկախ դիտորդ» դաշինքի կողմից իրականացված գործողությունների ամփոփում

Դիտարկված հավաքներ

Երևան-34	Լոռի-19	Վայոց ձոր-7
Արագածոտն-14	Կոտայք-9	Տավուշ-11
Արարատ-11	Ճիրակ-13	Գեղարքունիք-31
Արմավիր-6	Սյունիք-23	

Կուսակցությունների, դաշինքների նախընտրական շտաբների ղեկավարների հետ անցկացվել է 236 հարցազրույց:

Դիտարկվել է կուսակցությունների, դաշինքների 178 նախընտրական հանդիպում:

Նախընտրական քարոզչության փուլում հավաքների մասնակիցների հետ անցկացվել է 422 հարցազրույց:

Ընտրապայքարին մասնակից բոլոր քաղաքական ուժերից հարցազրույց է անցկացվել 160 պատգամավորի թեկնածուի հետ:

Տեղամասային հանձնաժողովների նախագահների, քարտուղարների և անդամների հետ անցկացվել է 108 հարցազրույց:

Տարածքային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների հետ անցկացվել է 49 հարցազրույց:

«Անկախ դիտորդ» դաշինքի մասին

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը հիմնադրվել է 2017 թ. հունվարին 2021 թ. թվականի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների երկարաժամկետ դիտարկումն իրականացվում է «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ հետևյալ կազմակերպությունների կողմից.

- Չելսինսյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ,
- Իրազեկ քաղաքացիների միավորում,
- Ուղղակի ժողովրդավարություն,
- Գյումրու առաջընթաց,
- «Ռեստարտ Գյումրի» /Գյումրու «Ռեստարտ նախաձեռնությունների կենտրոն» ԹՀ ՀԿ,





- Կանանց իրավունքների տուն:

Ձեր կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ կարող եք ահազանգել հետևյալ հեռախոսահամարներով.

Եթե ընտրախախտում եք արձանագրել

☎ 0 8000 12 11

☎ 077 34 22 68

☎ 041 12 33 02

Եթե ընտրական գործընթացի հետ կապված խախտվել են ձեր աշխատանքային իրավունքները կամ գործատուն խախտել է ձեր իրավունքները

☎ 041 12 33 02



Twitter: @IndObserverArm

Facebook: @Անկախ դիտորդ - Independent Observer

E-mail: independentobserverarm@gmail.com

